Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՐՏՈՒՐ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ԵՎ ԼԵՎՈՆ ՖԱՐՄԱՆՅԱՆԻ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Արտուր Մովսիսյան, Լևոն Ֆարմանյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ գիտության կոմիտեի նախագահի տեղակալ, ՀՀ գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար

3. Գործուղման վայրը և ժամկետները

Մոլդովայի Հանրապետություն, ք. Քիշնև, մայիսի 22-ից 25-ը, 2023 թվական

4. Հրավիրող կողմը

Եվրոպական հանձնաժողովի հետազոտությունների և նորարարության հարցերով տնօրենություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Արևելյան գործընկերության (ԱլԳ) հետազոտությունների և նորարարության հարցերով ոչ պաշտոնական աշխատանքային խմբի 5-րդ հանդիպմանը

6. Քննարկված թեմաները

- Հետազոտությունների և նորարարության ոլորտներում ԱլԳ շրջանակում միջազգային համագործակցության զարգացման հեռանկարները,
- ԱլԳ երկրների մասնակցությունը ԵՄ «Հորիզոն Եվրոպա» ծրագրին,
- ԱլԳ հետազոտությունների և նորարարության առաջնահերթությունները և անդամ երկրներում իրականացվող միջոցառումները, բարեփոխումները և մարտահրավերները,
- Եվրոպական հետազոտական տարածքում միջազգային համագործակցության արժեքները և սկզբունքները,
- ընթացիկ այլ հարցեր:

7. *Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը*

Լ. Ֆարմանյանը ներկայացրել է ՀՀ գիտության կոմիտեի կողմից իրականացվող բարեփոխումների ծրագիրը, ՀՀ գիտական համայնքի՝ Եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրմանն ուղղված քայլերը, ինչպես նաև ԵՄ «Հորիզոն Եվրոպա» ծրագրին ՀՀ մասնակցության ընթացքի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

Ա.Մովսիսյանը հանդիպում է ունեցել Եվրոպական հանձնաժողովի հետազոտությունների և նորարարության հարցերով տնօրենության ներկայացուցիչների հետ, քննարկվել է Եվրոպական հետազոտական տարածքին Հայաստանի ինտեգրման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին Եվրոպական հանձնաժողովի հետազոտությունների և նորարարության հարցերով տնօրենության կողմից հնարավոր աջակցության հարցը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Եվրոպական հանձնաժողովի հետազոտությունների և նորարարության հարցերով տնօրենության ներկայացուցիչների հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ շարունակելու աշխատանքային շփումները և պարբերաբար իրազեկելու իրականացվող ծրագրերի ընթացքի մասին:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել ԵՄ «Հորիզոն Եվրոպա» ծրագրին Հայաստանի մասնակցության ակտիվացմանն ուղղված հետագա քայլերին առավել մանրամասն անդրադառնալ 2023 թվականի դեկտեմբերին Երևանում կայանալիք Հետազոտությունների և նորարարության հարցերով ԵՄ – Հայաստան համատեղ կոմիտեի երկրորդ հանդիպման ընթացքում:

Որոշվել է Արևելյան գործընկերության հետազոտությունների և նորարարության հարցերով ոչ պաշտոնական աշխատանքային խմբի 6-րդ հանդիպումն անցկացնել 2024 թվականի գարնանը:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Գործուղման շրջանակում Մոլդովայի հետազոտությունների և մշակումների ազգային գործակալության ներկայացուցչի հետ քննարկվել է երկկողմ համագործակցության հնարավորության հարցը: Կողմերը պայմանավորվել են աշխատանքային կարգով շարունակել քննարկումները մոլդովական կողմից փոխանցված համաձայնագրի նախագծի դրույթների շուրջ: Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել Ռումինիայի Հետազոտությունների և նորարարությունների նախարարության ներկայացուցչի հետ՝ սկսելու քննարկումներ երկկողմ համագործակցությանն առնչվող հարցերի վերաբերյալ:

Արտուր Մովսիսյան

Լևոն Ֆարմանյան

29.05.2023 թ.